

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ – 1 <ԳՆՈՄՈՆ> ԲԲԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ Հ.1Խ-22

ք. Երևան, Արշակունյանց պողոտա 12 14.01.2022թ., ժամը 16:00

Նիստին ներկա էին՝ խորհրդի 8/ուր/ անդամներից 6/վեցը/:

Խորհրդի նախագահ՝ - Շիրինյան Հ. Ռ.

Խորհրդի անդամներ՝ - Գրիգորյան Է. Գ., Մաթևոսյան Է.Հ., Գրիգորյան Ս.Է.,  
Հակոբյան Ն. Խ., Մինասյան Ս. Հ.

Նիստին չեն մասնակցել- Հակոբյան Ս. Գ. և Եսայան Հ. Լ.:

Հրավիրված անձ- Ընկերության գլխավոր հաշվապահ՝ Ազատուհի Սերյոժայի  
Մակարյանը:

Նիստի օրակարգը՝

- 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով  
աուդիտորական ընկերության ընտրության մրցույթի հայտարարումը:

Նիստը բացեց խորհրդի նախագահը և ձայնը տվեց խորհրդի նիստի նախաձեռնող  
գործադիր մարմնի ղեկավարին:

Ելույթ ունեցավ խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն Էմիլ Գուրգենի  
Գրիգորյանը:

Նա ասաց, որ ավարտվել է 2021թ. ֆինանսատնտեսական տարին և  
Ընկերության այդ տարվա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների  
արժանահավատության ստուգման գործընթացը լիարժեք ապահովելու լիարժեք  
անհրաժեշտ է ներգրավել աուդիտորական ընկերության և առաջարկեց հայտարարել  
մասնագիտացված աուդիտորական ընկերության ընտրության մրցույթ: Է. Գ.  
Գրիգորյանը նաև հավելեց, որ ցանկալի է, որ աուդիտին իրականացնող անձի  
ծառայությունների համար վճարվող գումարի չափը չգերազանցի 2,500,000.00 ՀՀ  
դրամը, աուդիտորական ընկերության ընտրության մրցույթին մասնակցելու հայտերն  
ընդունման վերջնաժամկետը սահմանվի մինչև 25.02.2022թ.:

Մրցույթի մասին հայտարարությունը կտեղադրվի <Հայաստանի  
Հանրապետության> օրաթերթում:

Ներկայացված առաջարկությունների վերաբերյալ այլ առաջարկություններ  
չեղան և հարցը դրվեց քվեարկության հետևյալ բովանդակությամբ՝

- <Հայաստանի Հանրապետության> օրաթերթի միջոցով հայտարարել Ընկերության 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտորական ընկերության ընտրության մրցույթ՝ մրցույթին մասնակցելու հայտերի ընդունման վերջնաժամկետը սահմանելով մինչև 25.02.2022թ.:
- Քվեարկության դրված հարցն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 6 /վեց/ կողմ:

**Խորհրդի նախագահ**

**Շիրինյան Հ.Ռ.**

**Խորհրդի անդամներ**

**Գրիգորյան Է. Գ.**

**Մաթևոսյան Է. Հ.**

**Գրիգորյան Ս. Է.**

**Հակոբյան Ն. Խ.**

**Մինասյան Մ. Հ.**

**ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ – 1 <ԳՆՈՄՈՆ> ԲԲԸ**

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ Հ.1Խ-22**

**ք. Երևան, Արշակունյանց պողոտա 12 25.02.2022թ., ժամը 16:00**

Նիստին ներկա էին խորհրդի 8/ութ/ անդամներից 7/յոթը/:

Խորհրդի նախագահ՝ - Շիրինյան Հ. Ռ.

Խորհրդի անդամներ՝ - Գրիգորյան Է. Գ., Մաթևոսյան Է. Հ., Գրիգորյան Ս. Է., Հակոբյան Ն. Խ., Մինասյան Ս. Հ.

Նիստին չի մասնակցել- Եսայան Հ. Լ.:

Նիստի օրակարգը՝

1. Ընկերության 2021թ. ֆինանսատնտեսական գործնետության ստուգման նպատակով աուդիտորական ընկերության ընտրության համար հայտարարված մրցույթի արդյունքների ամփոփում:
2. Ընկերության արտաքին աուդիտորի հաստատման նպատակով Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովի հրավիրումը:

Նիստը բացեց խորհրդի նախագահը և առաջին հարցի վերաբերյալ ձայնը տվեց խորհրդի նիստի նախաձեռնող գործադիր մարմնի ղեկավարին:

Ելույթ ունեցավ խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն Գրիգորյան Է. Գ.:

Նա ասաց, որ 25.02.2022թ. ավարտվել է Ընկերության 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտորական ընկերության համար հայտարարված մրցույթի ժամկետը և ստացվել է մեկ հայտ՝ ներկայացված <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի կողմից: Է. Գ. Գրիգորյան նառաջարկեց <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաթեթը բացել խորհրդի նիստում՝ խորհրդի անդամների ներկայությամբ:

Փաթեթում առկա է, կնքված գրությունը՝ ուղղված Ընկերության գլխավոր տնօրենին, <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի և նրա գործունեության համառոտ նկարագիրը, սպասարկող անձնակազմի կենսագրական տվյալները, աուդիտորի որակավորման վկայականների պատճենները, ընկերության պատվիրատուների ցանկի մի մասը և այլ փաստաթղթեր, ինչպես նաև <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի գնային առաջարկն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանն աուդիտորական ուսումնասիրության վերաբերյալ, որն կազմում է 2,100,000.00 ՀՀ դրամ:

Է. Գ. Գրիգորյանը նաև ներկաներին ներկայացրեց, որ քանի որ մրցույթի վերջնաժամկետին արդեն իսկ հայտնի էր հայտ ներկայացնողի անվանումը, որոշակի լրացուցիչ ուսումնասիրություններ են կատարվել <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի վերաբերյալ, որոնց արդյունքում <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի գործունեության վերաբերյալ բացասական

կարծիքներ չեն ձևավորվել և միաժամանակ հաստատվել է, որ <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ն, նրա մասնակիցները կամ ներկայացուցիչները որևէ փոխկապակցվածություն չունեն Ընկերության նշանակալից բաժնետերերի, խորհրդի և գործադիր մարմնի անդամների, այդ թվում՝ գլխավոր հաշվապահի հետ:

Ամփոփելով ելույթը Է. Գ. Գրիգորյանն առաջարկեց նախնական հավանության արժանացնել <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի՝ որպես Ընկերության արտաքին աուդիտորի, թեկնածությունը, և Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի կողմից նրան, որպես Ընկերության աուդիտոր հաստատելուց հետո, ներկայացված գնային պայմանով, սահմանված կարգով պայմանագիր կնքել <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի հետ:

Օրակարգի առաջին հարցը դրվեցք վեարկության:

Բաց քվեարկությամբ օրակարգի առաջին հարցն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 7 /յոթ/ կողմ:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ խորհրդի նախագահ Շիրինյան Հ. Ռ.:

Նա առաջարկեց Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող մասնագիտական աուդիտորական ընկերության հաստատման մասին օրակարգով Ընկերության բաժնետերեր իարտահերթ ժողով հրավիրել սույն թվականի մարտի 16-ին, ժամը 17:00-ին, Ընկերության վարչական շենքում, արտահերթ ժողովի վերաբերյալ հայտարարությունը հնարավորինս շուտ հրապարակել <Հայաստանի Հանրապետության> օրաթերթի միջոցով, իսկ նշված ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի /անվանատերերի/ ցուցակի կազմման համար հիմք ընդունել Ընկերության բաժնետերերի ռեեստրավարի կողմից սույն թվականի մարտի մեկի դրությամբ կազմված տվյալները:

Ամփոփելով ելույթը Հ. Ռ. Շիրինյանը ներկայացրեց նաև արտահերթ ընդհանուր ժողովի քվեարկության թերթիկի ձևը և բովանդակությունը:

Բաց քվեարկությամբ օրակարգի առաջին հարցն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 7 /յոթ/ կողմ:

**Խորհրդի նախագահ՝**

**Խորհրդի անդամներ՝**

**Շիրինյան Հ.Ռ.**

**Գրիգորյան Է. Գ.**

**Մաթևոսյան Է.Հ.**

**Հակոբյան Ս. Գ.**

**Գրիգորյան Ս. Է.**

**Հակոբյան Ն. Խ.**

Մինասյան Մ. Հ.

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ – 1 <ԳՆՈՄՈՆ> ԲԲԸ

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Խ. 1ԱԺ-22

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ք. Երևան, Արշակունյանց պողոտա 12

16.03.2022թ., ժամը 17:00

Ժողովը բացեց Ընկերության գլխավոր տնօրեն Գրիգորյան Է. Գ.: Նա առաջարկեց ընտրել ժողովի նախագահ, քարտուղար և հաշվիչ հանձնաժողով 3/երեք/ անդամներից: Բացք վեարկությամբ ընտրվեցին ժողովի նախագահ՝ Է. Գ. Գրիգորյանը, քարտուղար՝ Ն. Խ. Հակոբյանը և հաշվիչ հանձնաժողովի անդամները՝ Ժամհարյան Ա. Գ., Սուքիասյան Լ. Ս. և Բուլոյան Ա. Ա.:

Հաշվիչ հանձնաժողովն ընտրեց հանձնաժողովի նախագահ՝ Ժամհարյան Ա. Գ.:

Հաշվիչ հանձնաժողովը զեկուցեց, որ ներկա են Ընկերության 1,095,340 հատ հասարակ բաժնետոմսերի 13 բաժնետերեր և նրանց լիազոր ներկայացուցիչները, որոնց պատկանում է 970,601 հատ հասարակ բաժնետոմսեր, ինչը կազմում է 88,675%:

Ընկերության արտահերթ ժողովի քվորումը առկա է:

Ժողովի նախագահ Է. Գ. Գրիգորյանը ներկայացրեց արտահերթ ժողովի օրակարգը:

Օրակարգ՝

Ընկերության 2021թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության հաստատում:

Բաց քվեարկությամբ արտահերթ ժողովի օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի հարցը ներկայացրեց ժողովի նախագահ Է. Գ. Գրիգորյանը:

Իր ելույթում նա ներկայացրեց միակ հայտ ներկայացրած <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ին, նշելով, որ ներկայացրած փաթեթում ներգրվված փաստաթղթերը համապատասխանում են մրցութին ներկայացրած պահանջներին: Ընկերությունն ունի բարի համբավ, ունի լիցենզիա աուդիտ իրականացնելու համար, աշխատակիցներն ունեն որակավորմանը կայացրեք:

Գնային առաջարկը <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ին՝ որպես Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող մասնագիտացված աուդիտորական ընկերություն հաստատելու հարցը:

Կողմ - 970,601 ձայն, դեմ - 0 ձայն, ձեռնպահ - 0:

Որոշեցին՝

- Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող

Մասնագիտացված աուդիտորական ընկերություն հաստատել<Պրոգրես-Աուդիտ>  
ՓԲԸ-ին:

Ժողովը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները:

Արտահերթ ժողովի օրակարգը սպառվեց և հայտարարվեց նրա ավարտը:

**Ժողովինախագահ՝**

**Քարտուղար**

**Է. Գ. Գրիգորյան**

**Ն. Խ. Հակոբյան**

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ – 1 <ԳՆՈՄՈՆ> ԲԲԸ  
ք. Երևան 16.03.2022թ., ժամը 17:00  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ  
**Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ**

Քվեարկությանը դրվող հարցը.

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող մասնագիտացված աուդիտորական ընկերություն հաստատել <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ին:

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Ընկերության հասարակ բաժնետոմսերի քանակը՝ \_\_\_\_\_ :

**Ցուցում**

Քվեարկությա համար պետք է նշում կատարել միայն նախընտրելի տարբերակի համար նախատեսված վանդակում:

Քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ /ներկայացուցիչի/ կողմից:

---

ստորագրություն

**ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ – 1 <ԳՆՈՄՈՆ> ԲԲԸ**

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ Հ.1Խ-22**

**ք. Երևան, Արշակունյանց պողոտա12 27.05.2021թ., ժամը 19:00**

Նիստին ներկա էին խորհրդի 8/ութ/ անդամներից 8/ութը/:

Խորհրդի անդամներ՝ Գրիգորյան Է. Գ., Մաթևոսյան Է. Հ., Գրիգորյան Ս. Է., Հակոբյան Ն. Խ., Մինասյան Մ. Հ., Հակոբյան Ս. Գ. և Եսայան Հ. Լ.:

Նիստը բացեց խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն Գրիգորյան Է. Գ.:

Նա շնորհավորեց նորընտրված խորհրդի անդամներին և առաջարկեց խորհրդի օրակարգը՝

Օրակարգը՝

•

Խորհրդի նախագահի ընտրումը:

Օրակարգի առաջարկությունն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 8 կողմ:

Խորհրդի անդամ, ընկերության իրավաբանը՝ Էդուարդ Հայկազի Մաթևոսյանը առաջարկեց խորհրդի նախագահ ընտրել խորհրդի անդամ Հրանտ Ռուբենի Շիրինյանին:

Բաց քվեարկությամբ առաջարկությունն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 8/ութ/կողմ:

**Խորհրդի նախագահ՝**

**Շիրինյան Հ. Ռ.**

**Խորհրդի անդամներ՝**

**Գրիգորյան Է. Գ.**

**Հակոբյան Ս. Գ.**

**Մաթևոսյան Է. Հ.**

**Գրիգորյան Ս. Է.**

**Հակոբյան Ն. Խ.**

**Մինասյան Մ. Հ.**

**Եսայան Հ. Լ.**